Վլադիմիր Կարապետյան

Ծնվել է 1969թ. հուլիսի 5-ին, Երևանում:

Կրթություն
1986-1993թթ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ, արաբերեն լեզվի և գրականության մասնագետ:

Աշխատանքային գործունեություն՝
1995-1996թթ. ՀՀ արտաքին գործերի նախարարության ԱՊՀ վարչության ԱՊՀ երկրների բաժնի կցորդ,
1996-1997թթ. Ուկրաինայում ՀՀ դեսպանության երրորդ, այնուհետև՝ երկրորդ քարտուղար,
1997-1998թթ. ԱԳՆ ԱՊՀ վարչության ԱՊՀ երկրների բաժնի պետի պաշտոնակատար,
1998-1999թթ. ԱԳՆ ԱՊՀ վարչության ԱՊՀ երկրների բաժնի պետ,
1999-2001թթ. ԱԳՆ անվտանգության և սպառազինությունների վերահսկողության վարչություն, անվտանգության գծով համագործակցության բաժնի պետ,
2001-2004թթ. Վրաստանում ՀՀ դեսպանություն, խորհրդական,
2004-2006թթ. ԱԳՆ մամուլի և տեղեկատվության վարչության մամուլի հետ կապերի բաժնի պետ,
2006-2008թթ. ԱԳՆ մամուլի և տեղեկատվության վարչության պետ, մամուլի քարտուղար,
2008-2013թթ. «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն, արտաքին հարաբերությունների պատասխանատու,
2013 - 2019թթ. «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ,
2019 - 2020թթ. ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար:

2021թ. հունիսի 1-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան:

Օտար լեզուների իմացություն՝
ռուսերեն, անգլերեն, ուկրաիներեն և արաբերեն:

Ընտանեկան կարգավիճակ՝
ամուսնացած է, ունի երկու որդի և դուստր: